



**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4**

«_17_» ____12____ 2024 թ.



**ՎԱԿԵՐԱՅՆՈՒՄ ԵՄ՝
ՈՆԿՏՈՐ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ**

«_25_» ____12____ 2024 թ.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝
Կրթական ծրագիր՝
Որակավորում՝**

**«Անասնաբուծություն» 084101.00.6
«Անասնաբուծություն» 084101.01.6
Անասնաբուծության բակալավր**

Երևան 2024

Բովանդակություն		
•	Ծրագրի ընդհանուր բնութագիրը	
•	Ծրագրի նպատակը	
•	Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները	
•	Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները	
•	Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները	
•	Ծրագրի կառուցվածքը	
•	Դասավանդման և ուսումնառության մեթոդները	
•	Գնահատման մեթոդները	
•	Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան	
•	Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները	
•	ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ	
•	ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ	
	Հավելվածներ	
	Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան	
	Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից	
	Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ)	

1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Ֆակուլտետ	Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության
Ամբիոն	Անասնաբուծության
Ոլորտ/Միջոլորտային բնագավառ	Անասնաբուծություն/Գյուղատնտեսություն
Մասնագիտության (մասնագիտացման) անվանում և դասիչ	Անասնաբուծություն 084101.00.6
Մասնագիտության կրթական ծրագիր	Անասնաբուծություն 084101.01.6
ՄԿԾ պատասխանատու/ներ	Կ.Ա. Սուքիասյան, Է.Ա. Նիկողոսյան
Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար)	Առկա
Շնորհվող որակավորում (բակալավր, մագիստրոս)	Անասնաբուծության բակալավր
Ուսուցման լեզու	Հայերեն
Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ	Միջնակարգ կրթություն, միջին մասնագիտական կրթություն
Ուսուցման ընդհանուր տևողություն/ կրեդիտ	4 տարի, 240 կրեդիտ
որից՝ լսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական, լաբորատոր)	Լսարանային ուսուցում՝ 3664
ինքնուրույն աշխատանք	2880
քննաշրջան	21 շաբաթ
պրակտիկա	16 շաբաթ
ամփոփիչ ատեստավորում	4 շաբաթ

2. Ծրագրի նպատակը

Անասնաբուծությունը հիմնարար նշանակություն ունի Հայաստանի տնտեսության, հատկապես գյուղատնտեսության համար: Անասնաբուծության հիմնական նպատակներն են բուծել և կանխարգելել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, կանխել հիվանդությունների տարածումը կենդանիների շրջանում, նպաստել առողջ, հիվանդությունների նկատմամբ բարձր դիմադրողականություն և բարձր մթերատվություն ունեցող կենդանիների գլխաքանակի ավելացմանը, ապահովել հանրապետության բնակչությանը առողջ, անվտանգ, բարձրորակ կենդանական ծագման սննդամթերքով, ամրապնդել հանրապետության պարենային անվտանգությունը, պայքարել մարդու և կենդանիների համար ընդհանուր (զոոանտրոպոնոզ) հատուկ վտանգավոր հիվանդությունների տարածման դեմ՝ դրանով իսկ նպաստելով բնակչության առողջության պահպանմանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը միակ բուհն է Հայաստանի Հանրապետությունում, որը պատրաստում է բարձրագույն կրթությամբ անասնաբույժ-մասնագետներ: «Անասնաբուծություն» կրթական ծրագրի նպատակն է կրթել մասնագիտական խորը

գիտելիքներ և գործնական հմտություններ ունեցող անասնաբույժ-մասնագետներ, որոնք կիրականացնեն կենդանիների հիվանդությունների բուժական խնամքի և հակամաճարակային միջոցառումներ, կսպասարկեն խոշոր և մանր ֆերմերային տնտեսությունները, կաշխատեն մանր ընտանի և դեկորատիվ կենդանիներին սպասարկող անասնաբուժական կլինիկաներում, տեսչական աշխատանք կվարեն պետական վերահսկողական գերատեսչություններում՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական և ընտանի կենդանիների առողջության պահպանմանն ու պարենամթերքի անվտանգության ապահովմանը:

3. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները

«Անասնաբուժություն» մասնագիտությունը հիմնարար նշանակություն ունի տնտեսության զարգացման, պարենային անվտանգության և հասարակական առողջության ապահովման համար: ՀՀ անասնապահական տնտեսություններում, համայնքներում, տեսչական և վերահսկողական մարմիններում մեծ է անասնաբույժ-մասնագետների պահանջարկը: ՀԱԱՀ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժության ֆակուլտետը հազեցած է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով՝ ժամանակակից սարքավորումներով կահավորված լաբորատորիաներ, «Անասնաբուժության գերազանցության կենտրոն», անասնաբուժական կլինիկա և ուսումնափորձական տնտեսություն, որոնք կարևոր նշանակություն ունեն որակյալ անասնաբույժ-բժիշկներ կրթելու համար: Որակյալ, բազմակողմանի կրթված անասնաբույժ-բժիշկների պատրաստումը ռազմավարական խնդիր է Հայաստանի համար:

4. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները (ԸԿ)

Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝

ԸԿ 1. Օգտագործել ստացած հումանիտար գիտելիքները սեփական գործունեության սոցիալական կարևորությունը գնահատելու համար:

ԸԿ 2. Կիրառել ստացած տնտեսագիտական գիտելիքները արտադրություն կազմակերպելու և արտադրության տարբեր ոլորտներում իրականացված գործունեության արդյունքների արդյունավետությունը գնահատելու համար:

ԸԿ 3. Մասնագիտական գործունեության ոլորտում կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ նպաստելով սեփական մասնագիտական կարողությունների զարգացմանը:

ԸԿ 4. Հաղորդակցվել գրավոր և բանավոր, հայերեն և օտար լեզուներով, միջանձնային, միջմշակութային և մասնագիտական խնդիրները փոխհամագործակցության պայմաններում լուծելու համար:

ԸԿ 5. Արդյունավետ շփվել գործընկերների, ղեկավարության և սպառողների հետ՝ հանդուրժողականություն դրսևորելով այլ անձանց սոցիալական, էթնիկ և մշակութային տարբերությունների նկատմամբ:

ԸԿ 6. Զբաղվել ինքնակրթությամբ, պլանավորել մասնագիտական առաջընթացը:

ԸԿ 7. Օգտագործել ստացած գիտելիքները առաջին օգնություն ցուցաբերելու և արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու համար:

ԸԿ 8. Սեփական աշխատանքով նպաստել պետության հզորացմանը:

5. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)

Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին շրջանավարտը կկարողանա՝

ՄԿ 1. Ներկայացնել կենդանիների օրգանիզմի բնախոսական կառուցվածքը, կենսագործունեության առանձնահատկությունները, կենդանիների կերակրման, բուժման և խնամքի հիմունքները:

ՄԿ 2. Բացատրել վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ժամանակ օրգանիզմում տեղի ունեցող ախտաբանական փոփոխությունները:

ՄԿ 3. Տարբերակել կենդանիների հիվանդությունների առաջացման պատճառները, ներկայացնել ախտորոշման և բուժման սկզբունքները:	
ՄԿ 4. Իրականացնել գյուղատնտեսական, ընտանի կենդանիների ոչ վարակիչ, ինֆեկցիոն, մակարուծային, վիրաբուժական, ծննդագիտական հիվանդությունների և թունավորումների ախտորոշում, բուժում, կանխարգելում և սպանդանոցային ծագման հումքի և մթերքի սանիտարական հսկողություն:	
ՄԿ 5. Իրականացնել մասնագիտական գործունեություն անասնաբուժական օրենսդրությամբ ու կարգավորող իրավական ակտերին համապատասխան:	
ՄԿԾ վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի	
ՄԿ 1 վերջնարդյունքներ	
Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝	
1.1	Ներկայացնել գյուղատնտեսական կենդանիների օրգանիզմի մակրո- և միկրոկառուցվածքը, տարբերակել առողջ օրգանները ախտահարվածներից:
1.2	Բացատրել օրգանիզմի տարբեր կառուցվածքային միավորների գործառույթները և ֆիզիոլոգիական բնախոսական ցուցանիշները:
1.3	Ներկայացնել տարբեր կենդանատեսակների խնամքի, բուժման և կերակրման առանձնահատկությունները:
ՄԿ 2 վերջնարդյունքներ	
2.1	Բացատրել ախտաբանական ֆիզիոլոգիական գործընթացների պատճառները, զարգացման մեխանիզմները, դրսևորումները, հնարավոր ելքը:
2.2	Բացատրել ախտաբանամորֆոլոգիական փոփոխությունների պատճառները, բնույթը, զարգացման մեխանիզմները, դրսևորումները:
2.3	Իրականացնել կենդանիների ախտաբանամորֆոլոգիական հետազոտություն:
ՄԿ 3 վերջնարդյունքներ	
3.1	Տարբերակել հիվանդությունների հարուցիչները և բացատրել դրանց ազդեցությունը օրգանիզմի վրա:
3.3	Իրականացնել կենդանիների հիվանդությունների ախտորոշում և տարբերակիչ ախտորոշում կլինիկական հետազոտության, լաբորատոր քննության և գործիքային հետազոտության եղանակների կիրառմամբ:
3.4	Բացատրել դեղերի դասակարգման եղանակները, ազդեցության մեխանիզմները, կիրառման ցուցումները և հակացուցումները, ազդեցության բացասական հետևանքները դրանց ոչ ճիշտ օգտագործման դեպքում, տարբեր հիվանդությունների դեղորայքային բուժման սկզբունքները:
ՄԿ 4 վերջնարդյունքներ	
4.1	Ներկայացնել կենդանիների հիվանդությունների տարածվածությունը, պատճառագիտությունը և դասակարգումը, զարգացման մեխանիզմները, բնորոշ կլինիկական նշանները, ընթացքը, ախտորոշումը, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը:
4.2	Բացատրել «թույն» հասկացությունը, թույների դասակարգումը, տեսակները, դրանց ազդեցության մեխանիզմները, թունավորումների պատճառագիտությունը, զարգացման մեխանիզմները, կլինիկական դրսևորումները, ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը:
4.3	Իրականացնել գյուղատնտեսական, ընտանի կենդանիների և թռչունների հիվանդությունների և թունավորումների ախտորոշում, բուժում և կանխարգելում:
4.4	Իրականացնել կենդանական ծագման հումքի և մթերքի սանիտարական հսկողություն:
4.5	Համապատասխան եղանակով բուժել վիրաբուժական հիվանդությունները:
4.6	Իրականացնել կենդանու հղիության և անպտղության պատճառների որոշում,

	կոնսերվատիվ և վիրահատական ծննդօգնություն նորմալ և ախտաբանական ծննդաբերությունների դեպքում, կենդանիների կաթնագեղձի, վերարտադրողական օրգանների հիվանդությունների, նորածինների հիվանդությունների ախտորոշում, բուժում և կանխարգելում:
4.7	Արագ կանխել կենդանիների հիվանդությունների ախտորոշման և բուժման ընթացքում ծագող անկանխատեսելի իրավիճակների զարգացումը:
ՄԿ 5 վերջնարդյունքներ	
5.1	Ներկայացնել անասնաբուժական օրենսդրության ազգային և միջազգային հիմունքները, հատուկ կանոններն ու կանոնակարգերը, որոնք կարգավորում են անասնաբուժական գործունեությունը տեղական, ազգային և միջազգային մակարդակներում:
5.2	Կատարել տարբեր դեպքերի անասնաբուժական փորձաքննություն և տալ համապատասխան եզրակացություն:

6. Ծրագրի կառուցվածքը	
6.1.	Ուսումնական պլան (հավելված 1)
6.2.	Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից (հավելված 2)
6.3.	Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ (հավելված 3)
6.4.	Ծրագրի առարկաների համառոտ նկարագիրը

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օտար լեզու (ռուսաց լեզու)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Ա 1 մակարդակ. մուտքային պահանջ չկա Ա 2 մակարդակ. ուսանողը պետք է ունենա Ա 1 մակարդակով նախատեսված գիտելիքներ, կարողություններ և հմտություններ (ստուգվում է թեստի օգնությամբ)
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ձևավորել/զարգացնել ռուսաց լեզվով առօրյա կյանքում հանրային, կրթական, սոցիալական, մշակութային ոլորտներում հաղորդակցվելու կարողությունը, ընդլայնել բառապաշարը առօրյա, սոցիալական, մշակութային, կրթական, գիտահանրամատչելի ոլորտներում, զարգացնել հմտություններ ռուսերեն գիտահանրամատչելի և ուսումնական գրականության հետ ինքնուրույն աշխատելու նպատակով:

Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Կիրառել հաղորդակցության նպատակին համապատասխանող լեզվական միջոցներ, տեղեկատվության կանոններ և սկզբունքներ: 2. Օգտագործել ռուսաց լեզուն միջանձնային հաղորդակցության մեջ: 3. Դուրս բերել ռուսերեն բնօրինակ պարզ տեքստերից անհրաժեշտ տեղեկատվությունը: 4. Կիրառել մասնագիտական, կրթական ոլորտում հաղորդակցության համար անհրաժեշտ լեզվական միջոցներ, տեղեկատվության կանոններ և սկզբունքներ: 5. Օգտագործել ռուսաց լեզուն միջանձնային հաղորդակցության ընթացքում մասնագիտական խնդիրները լուծելիս: 6. Դուրս բերել ռուսերեն բնօրինակ մասնագիտական տեքստերից անհրաժեշտ տեղեկատվություն:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ բացատրություն, զրույց, իրավիճակային մեթոդ, աշխատանք զույգերով և խմբերով Ուսումնառության մեթոդներ՝ բառային աշխատանք, աղյուսակի ստեղծում, ուսուցողական խաղեր, վարժություններ, դերային խաղ
Գնահատման մեթոդները	Թեստեր, ինքնուրույն աշխատանք
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	«Անատոմիա»
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1,2 կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջ չկա
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ և ձևավորել գործնական հմտություններ՝ համեմատական, էվոլյուցիոն և ֆունկցիոնալ անատոմիայի, կենդանիների մարմնական (սոմատիկ), ընդերաբանական և ինտեգրող համակարգերի օրգանների և օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքի, զարգացման ընդհանուր առանձնահատկությունների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Նկարագրել օրգանիզմի սոմատիկ, ընդերային և ինտեգրող օրգան-համակարգերի մորֆոֆունկցիոնալ կառուցվածքը տարբեր կենդանիների մոտ, ցուցադրելով այն մուլժաժների և կենդանիների անատոմիական պատրաստուկների վրա: 2. Նկարագրել կենդանու օրգան-համակարգերի ճիշտ տեղադրությունը:

	3. Տարբերակել առողջ օրգանները ախտահարվածներից կենդանիների հերձման ժամանակ: 4. Իրականացնել կենդանու դիակի անատոմիական հետազոտություն:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, սլայդների, ուսումնական նյութերի, տեսաֆիլմերի, շնորհանդեսների ցուցադրում, լաբորատոր պարապմունքների անցկացում, բանավեճերի, քննարկումների, խմբային աշխատանքի, սեմինարների կազմակերպում: Ամբիոնում գտնվում են տարբեր կենդանիների տարաբնույթ չոր պատրաստուկներ, կաղապարվածքներ (մուլաժներ), ոսկրային սեգմենտներ, կմախքներ, մկանային և հոդային պատրաստուկներ, թաց ֆորմալինի մեջ սևեռված օրգան համակարգեր, տարբեր բնույթի դիդակտիկ նյութեր, որոնք ոչ միայն ցուցադրվում են դասաժամերի ընթացքում, այլ նաև ուսանողները կարող են ուսումնասիրել դրանք արտաժամյա: Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական տպագիր և էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, դասախոսությունների ժամանակ նյութի ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը, աշխատանք կենդանիների դիակների, մուլաժների և անատոմիական պատրաստուկների հետ
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ

Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ամրապնդել լեզվական համակարգի վերաբերյալ նախնական գիտելիքները և իմացության շրջանակը, զարգացնել ուսանողների լեզվամտածողությունը, հարստացնել գործուն բառապաշարը, սովորեցնել բանավոր և գրավոր խոսքում ընտրել բազմիմաստ բառեր, հոմանիշներ, հականիշներ, համանուններ, դարձվածքներ, վերլուծել մասնագիտական տեքստերը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Արտահայտել սեփական մտքերն անկաշկանդ բանավոր և գրավոր կապակցված խոսքով՝ ապահովելով գրական հայերեն խոսքին

	ներկայացվող բոլոր պահանջները՝ ուղղախոսական, ուղղագրական, բառապաշարային, քերականական, ոճական, տրամաբանական: 2. Բանավոր և գրավոր խոսքում տարբերել բազմիմաստ բառերի նշանակությունները՝ ըստ տեքստի բովանդակության, ընկալելով հոմանիշների և հականիշների ոճական արժեքը, բառերի ու դարձվածների փոխաբերական իմաստները: 3. Կազմել տեխնիկական բնույթի տեքստեր կամ գործնական գրություններ դրանք լեզվական ընդունված կաղապարներով ներկայացնելու, զեկուցումներով հանդես գալու համար: 4. Օգտագործել դասագրքերը, բառարանները, տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը՝ գիտելիքները հարստացնելով լեզվին, խոսքին և հաղորդակցությանը վերաբերող այլ նյութերով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդները՝ ԽԻԿ համակարգը (խթանում, իմաստավորում, կշռադատում), մտագրոհ, ձնագնդի մեթոդ, զրույց և այլն Ուսումնառության մեթոդներ՝ ուսումնամեթոդական գրականության օգտագործում, գործնական աշխատանքների կատարում, ինքնուրույն աշխատանքների կատարում
Գնահատման մեթոդները	Թեստեր, ինքնուրույն աշխատանք
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց պատմություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտներ (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է խորացնել ուսանողների գիտելիքները հայոց պատմության վերաբերյալ, զարգացնել պատմատրամաբանական մտածողություն և հնարավոր բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու կարողություն:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Կիրառել քննադատական մտածողություն անցյալի և ներկայի պատմական դեպքերը գնահատելիս: 2. Հենվել պատմական փաստերի քննական վերլուծության վրա՝ ներկայիս քաղաքական գործընթացները գնահատելիս: 3. Ներկայացնել իրադարձությունները ժամանակի և տարածության մեջ (աշխարհագրական դիրք, բնական ռեսուրսներ և այլն): 4. Գնահատել աշխարհաքաղաքական իրողության հաշվառմամբ

	զարգացման ժամանակակից միտումները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ ինտերակտիվ դասախոսություն, նյութի վերլուծություն, քննարկումների, բանավեճերի վարում, սլայդների ցուցադրում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում, բացատրական-ցուցադրական, արտալսարանային դասախոսություններ, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտազրոհ Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում
Գնահատման մեթոդները	Թեստային աշխատանք, ինքնուրույն աշխատանք
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Լատիներեն լեզու
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է սովորեցնել ուսանողներին կարգալ լատիներեն բառերն ու արտահայտությունները, ճիշտ գրել անատոմիական, հյուսվածաբանական և կլինիկական տերմինները, լատիներեն անասնաբուժական տերմինաբանությունը կիրառել մասնագիտական գործունեության մեջ, դուրս գրել դեղատոմսեր:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Դրսևորել անասնաբուժական ոլորտի բառապաշարի և քերականության նվազագույն իմացության: 2. Օգտագործել լատիներենի խոսքի մասերը (գոյականներ ածականներ, բայեր, թվեր, դերանուններ, մակդիրներ, շաղկապներ, նախածանցներ և այլն): 3. Տիրապետել հնչյունաբանության կանոններին: 4. Բացատրել բառակազմության սկզբունքները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ բացատրություն, զրույց, իրավիճակային մեթոդ, աշխատանք զույգերով և խմբերով: Ուսումնառության մեթոդներ՝ բառային աշխատանք, աղյուսակի ստեղծում, ուսուցողական խաղեր, վարժություններ, դերային խաղ:

Գնահատման մեթոդները	Թեստեր, ինքնուրույն աշխատանք
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուծություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Անասնաբուծություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	7 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ապագա անասնաբույժների մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ անասնաբուծության ոլորտում կենդանիների գրագետ բուծում իրականացնելու, կենդանիների ճիշտ պահվածք և խնամք կազմակերպելու, կենդանական ծագման մթերքների արտադրության տեխնոլոգիական մի շարք խնդիրներ ազգային-տեղային, տարածաշրջանային և միջազգային պահանջներին համապատասխան լուծելու վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Բացատրել գյուղատնտեսական կենդանիների ծագման, ցեղագոյացման, բուծման մեջ կիրառվող տեսությունները: 2. Բացատրել գյուղատնտեսական կենդանիների ընտրության և զուգընթացության սկզբունքներն ու ձևերը: 3. Հաշվառել տարբեր տեսակի գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ցուցանիշները: 4. Կիրառել կենդանիների մթերատվության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ գյուղատնտեսական կենդանիների բարեկեցության, պահվածքի, խնամքի և կենդանական ծագման մթերքի արտադրության հետ կապված այլ տեխնոլոգիական գործընթացներ: 5. Վերլուծել շրջակա միջավայրի վրա անասնապահական արտադրության ազդեցության ռիսկերը (կենդանիներից արտանետումներ), ցույց տալ այդ ռիսկերի նվազեցման ուղիները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տարբեր ուսումնական նյութերի, սլայդների, տեսաֆիլմերի, շնորհանդեսների ցուցադրում, լաբորատոր պարապմունքների անցկացում, բանավեճերի, քննարկումների, խմբային աշխատանքի կազմակերպում Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսողումնասիրում, դասախոսությունների ժամանակ նյութի ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը

Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ընդհանուր քիմիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել «Քիմիա» գիտության բոլոր ճյուղերի տեսական և կիրառական դրույթներին, որոնք օգտակար կլինեն մասնագիտական գործունեության շրջանակներում, գիտելիքներ փոխանցել քիմիական տարրերի/նյութերի կենսաքիմիական հատկությունների և կենսաբանական համակարգերում դրանց դերի ու նշանակության մասին, դեղապատրաստություններում և սննդամթերքում առկա քիմիական բաղադրիչի փորձաքննության որակական և քանակական մեթոդների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Նկարագրել քիմիական պրոցեսների հիմնապատճառները, դրանց դերն ու կարևորությունը կենսական նշանակության գործընթացներում, տարաբնույթ քիմիական նյութերի փորձաքննության համար կիրառվող մեթոդներում: 2. Ներկայացնել կապը կենդանի օրգանիզմներում քիմիական տարրերի բաշխվածության և դրանց ֆունկցիոնալ ազդեցության միջև: 3. Նկարագրել դեղապատրաստություններում և սննդամթերքում առկա քիմիական բաղադրիչի փորձաքննության որակական և քանակական մեթոդները: 4. Կիրառել տեսական գիտելիքները գործնական խնդիրների լուծման համար:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, սեմինարներ, դիդակտիկ նյութերի քննարկում, լաբորատոր փորձարարական աշխատանքներ Ուսումնառության մեթոդներ՝ ինտերակտիվ դասախոսություն, լսարանային քննարկումներ, փորձարարական աշխատանքներ
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ քննություն և ամփոփիչ քննություն
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիր (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը	

(պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է բարձրացնել ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը, զարգացնել հաղորդակցական կարողությունը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Թարգմանել տեքստեր: 2. Վերարտադրել կարդացած տեքստը: 3. Վերլուծել ընթերցած տեքստը օտար լեզվով; 4. Գործածել բավականաչափ քերականական կառույցներ: 5. Գործածել առօրյա կարիքների հետ կապված մտապահված սահմանափակ բառապաշար: 6. Հաղորդակցվել անցած թեմաների շուրջ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ մտազրոհ, խճանկարի մեթոդ, անհատական աշխատանք, բանավեճ, ֆիլմերի դիտում, լսողական վարժություններ, երկխոսություն, քննարկումներ, թիմային աշխատանքներ, տեսասահիկներով ներկայացում Ուսումնառության մեթոդներ՝ տեքստերի թարգմանություն, զրույց
Գնահատման մեթոդները	Քննություն
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու և խոսքի մշակույթ
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Հայոց լեզու» առարկայի հետ:

Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ձևավորել գրագետ և տրամաբանված բանավիճելու, քննադատաբար մտածելու կարողություն, ինչը կնպաստի ուսանողի ինքնադրսևորմանը ոչ միայն մասնագիտության մեջ, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Սահմանել լեզվական և խոսքային կաղապարների ընդհանրություններն ու տարբերությունները: 2. Օգտագործել ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսք կազմելիս: 3. Հաղորդակցվել տարբեր իրադրություններում: 4. Կատարել լեզվական տարաբնույթ վարժություններ՝ օգտվելով տեխնիկական, պաշտոնական կամ գիտական ոլորտների բառամթերքից: 5. Օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը՝ գիտելիքները հարստացնելով լեզվին, խոսքին և հաղորդակցությանը վերաբերող այլ նյութերով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ. մտագրոհ, ձնագնդի մեթոդ, բանավեճ-քննարկում, կլոր սեղան (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), «ուղեղի փոթորիկ» (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն) Ուսումնառության մեթոդներ՝ երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, զեկուցումներ, ելույթներ, բանավեճեր
Գնահատման մեթոդները	Թեստեր, ինքնուրույն աշխատանք
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հասարակագիտական առարկաների մոդուլ (Հայոց պատմություն, Մշակութաբանություն, Քաղաքագիտություն, Փիլիսոփայություն)
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է նպաստել ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը, քաղաքացիական դիրքորոշում ունենալու կարողության ձևավորմանը, ուսանողների մոտ հետաքրքրություն արթնացնել հումանիտար գիտությունների և արվեստի նկատմամբ, ձևավորել հասարակությանն առնչվող խնդիրների նկատմամբ այլընտրանքային մոտեցումներ ցուցաբերելու կարողություն, նպաստել համաարդկային արժեքների համատեքստում ազգային պատմության և մշակույթի

	արժևորմանը, ուսանողների մշակութային ճաշակի զարգացմանը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Հիմնավորել սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հասարակական երևույթները գնահատելիս: 2. Քննադատորեն վերլուծել հասարակական գործընթացներին վերաբերող տեղեկատվությունը: 3. Բանավիճել՝ պահպանելով փաստարկման կանոնները (այդ թվում՝ էթիկական): 4. Ներկայացնել գաղափարների ազդեցությունը հասարակության զարգացման վրա (փիլիսոփայական միտք, քաղաքական գաղափարներ, մշակութային ձեռքբերումներ): 5. Բնութագրել ազգային յուրահատկությունները մշակութային բազմազանության համատեքստում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ տեղեկատվական և ակնարկային դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, զննական, ճանաչողական-ստեղծագործական, համագործակցային ուսուցման մեթոդներ, թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց ու պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսության ունկնդրում, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում, մասնակցություն ինտերակտիվ քննարկումների
Գնահատման մեթոդները	Թեստեր, ինքնուրույն աշխատանք
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Կենսամաթեմատիկա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է զարգացնել ապագա անասնաբույժների տրամաբանական և վերլուծական մտածողությունը, ուսուցանել ուսումնառության և աշխատանքի հետ առնչվող անասնաբուժության ոլորտի բազմաբնույթ խնդիրների լուծման մեթոդներ:

Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Ներկայացնել կենսամաթեմատիկայի պարզագույն խնդիրները՝ հստակ պարզաբանելով դրանց լուծման մեթոդները: 2. Հեշտությամբ կատարել մաթեմատիկական գործողություններ՝ վարժ տիրապետելով ածանցման և ինտեգրման գործողություններին: 3. Հմտորեն կիրառել գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության բաժինների ուսմանասիրությունից ստացած գիտելիքները խնդիրներ լուծելիս: 4. Վերլուծել կիրառական խնդիրները՝ գնահատելով դրանց լուծման հնարավոր ուղիները: 5. Կառուցել մաթեմատիկական մոդելներ մասնագիտական բնագավառներում առաջացող խնդիրների համար՝ առաջարկելով լուծումներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, լաբորատոր պարապմունքներ, բանավեճեր, քննարկումներ, խմբային աշխատանք, առաջադրանքի կատարում Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսությունների նյութի ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը
Գնահատման մեթոդները	Թեստային, բանավոր կամ գրավոր քննություններ, անհատական աշխատանքներ և այլն
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գենետիկա և կենսատեխնոլոգիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ESTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Հյուսվածաբանություն, սաղմնաբանություն», «Ընդհանուր քիմիա», «Անատոմիա», «Ֆիզիոլոգիա», «Կենսաքիմիա» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ կենդանիների ժառանգական նյութի կազմավորման, դրա կենսաքիմիական ակտիվության և հատկանիշների, ժառանգման և փոփոխականության օրինաչափությունների, հոտերի, պոպուլյացիաների ձևավորման և փոփոխման եղանակների, կենսատեխնոլոգիայի զարգացման հեռանկարների, բջջային, գենային և գենետիկական ինժեներիայի նվաճումների, իմունային և սննդային կենսատեխնոլոգիայի վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Բացատրել ժառանգական նյութի կազմությունը, դրա ժառանգման

(մինչև 6)	մեխանիզմները, փոփոխականության դրդապատճառները և տեսակները: 2. Ներկայացնել պոպուլյացիաների ձևավորման սկզբունքները և դրանցում գործող պրոցեսների գենետիկական մեխանիզմները: 3. Նկարագրել իմունային համակարգի գենետիկական հիմունքները և իմունային պրոցեսների կարգավորման գենետիկական մեխանիզմները: 4. Լուսաբանել տեսակների կարիոտիպերի գենետիկական գնահատման մեթոդները: 5. Նկարագրել գծերի, հոտերի և ընտանիքների համար գենետիկական նշադիրների բացահայտման մեթոդը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, լաբորատոր պարապմունքներ, բանավեճեր, քննարկումներ, խմբային աշխատանքի, առաջադրանքի կատարում Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հյուսվածաբանություն, սաղմնաբանություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է « Անատոմիա», «Ընդհանուր քիմիա» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ բջիջների, հյուսվածքների, օրգանների միկրոսկոպիկ կառուցվածքի և օնտոգենեզում դրանց զարգացման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Նկարագրել կենդանիների բոլոր օրգանների, հյուսվածքների, բջիջների միկրոսկոպիկ կառուցվածքը: 2. Նկարագրել վնասված բջիջների, հյուսվածքների և օրգանների ռեգեներացիայի (վերականգնման) և փոխպատվաստման եղանակները: 3. Նկարագրել ձվաբջիջների, սաղմերի կոլտիվացիայի եղանակները արգանդի պատում, դրանց պատվաստման հնարավորությունները: 4. Տիրապետել հյուսվածաբանական պատրաստուկների հետ աշխատելու և հյուսվածաբանական հետազոտություններ իրականացնելու հմտություններին: 5. Իրականացնել հյուսվածաբանական հետազոտություններ՝ նույնականացնելով

	օրգանները, հյուսվածքները, բջիջները նորմալում և ախտաբանության ժամանակ՝ գնահատելով օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տարբեր ուսումնական նյութերի, սլայդերի, տեսաֆիլմերի, շնորհանդեսների ցուցադրում, լաբորատոր պարապմունքների անցկացում, բանավեճեր, քննարկումներ, խմբային աշխատանք Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսության նյութի ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը, աշխատանք հյուսվածաբանական պատրաստուկների հետ
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություն
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ֆիզիոլոգիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Անատոմիա», «Ընդհանուր քիմիա», «Կենսաքիմիա» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի հիմնական նպատակն է ձևավորել հիմնարար գիտելիքներ և հմտություններ գյուղատնտեսական, ընտանի, լաբորատոր և էկզոտիկ կենդանիների, թռչունների օրգանիզմում ընթացող ֆիզիոլոգիական գործընթացների և օրգանների գործառույթների, մթերատու կենդանիների օրգանիզմում դրանց որակական առանձնահատկությունների մասին:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Բացատրել օրգանիզմի հոմեոստազը, դրա նշանակությունը և կարգավորման մեխանիզմները, ֆիզիոլոգիայի հիմնական օրենքները: 2. Ներկայացնել կենդանիների օրգան համակարգերի գործառույթների և օրգանիզմում ընթացող ֆիզիոլոգիական գործընթացների առանձնահատկությունները: 3. Լուսաբանել տարբեր օրգան համակարգերի գործառույթների կարգավորման կենտրոնական և տեղային մեխանիզմները (նյարդային և հումորալ), կենդանիների հիմնական ֆիզիոլոգիական ցուցանիշները: 4. Գնահատել կենդանիների օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակը՝ հաշվի առնելով տեսակային առանձնահատկությունները: 5. Կատարել կենդանիների և թռչունների արյան նմուշառում հետագա հետազոտությունների համար:

	6. Որոշել կենդանիների արյունաբանական ցուցանիշները (ձևավոր տարրերի քանակ, լեյկոցիտային բանաձև, հեմոգլոբինի պարունակություն): 7. Գնահատել ընտանի կենդանիների և թռչունների տարբեր օրգան համակարգերի գործունեությունը (սրտանոթային, շնչառական, մարսողական, միզային, նյարդային և այլն):
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, լաբորատոր պարապմունքներ, բանավեճեր, քննարկումներ, խմբային աշխատանք, առաջադրանքի կատարում Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Կենսաքիմիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Ընդհանուր քիմիա»առարկայի հետ
Դասընթացի նպատակը	Դասընթացի հիմնական նպատակն է հաղորդել գիտելիքներ և ձևավորել գործնական հմտություններ բջջի կենսագործունեության հիմքում ընկած կենսաքիմիական և նյութափոխանակային գործընթացների, նյութափոխանակության հանգուցային ուղիների, ինտեգրալ սխեմաների, դրանց փոխկապակցության և ինքնակառավարման մեխանիզմների, հաճախ օգտագործվող փորձարարական-հետազոտական մեթոդների, լաբորատոր աշխատանքների կատարման սկզբունքների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Ներկայացնել կենդանի մատերիա կազմող քիմիական միացությունների բնույթը, կառուցվածքը, որակական և քանակական կազմը, անվանակարգումը, դասակարգումը, կենսաբանական ֆունկցիաները: 2. Նկարագրել սննդարար նյութերը, դրանց մարսողությունը և ներծծումը ստամոքսաաղիքային ուղիներում, այդ գործընթացները կարգավորող մեխանիզմները: 3. Ներկայացնել սննդամթերքի կենսաքիմիական առանձնահատկությունները, ֆերմենտատիվ պրոցեսները:

	4. Նկարագրել ժառանգական ինֆորմացիոն մոլեկուլների կառուցվածքը և դերը կենսաբանական տեղեկատվության գրանցման, կոդավորման և փոխադրման գործընթացում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, լաբորատոր պարապմունքներ, բանավեճեր, քննարկումներ, խմբային աշխատանք, առաջադրանքի կատարում Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն բանավեճերին, քննարկումներին
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիր (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Կենդանիների կերակրում
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Ֆիզիոլոգիա», «Կենսաքիմիա» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի հիմնական նպատակն է ապագա անասնաբույժների մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ գյուղատնտեսական կենդանիների կերատեսակների, դրանց քիմիական բաղադրության, սննդարար և կենսաբանական ակտիվ նյութերի պարունակության, մարսողության և յուրացման առանձնահատկությունների, կերատեսակների պրոտեինային, ածխաջրային, հանքային և վիտամինային սննդարարության վերաբերյալ, կարողություններ և հմտություններ՝ կերատեսակների սննդարարությունը գնահատելու, կերակրման նորմաներն օգտագործելու, լիարժեք և հաշվեկշռված կերաբաժիններ կազմելու տարբեր տեսակի, տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակի ու մթերատվության կենդանիների օրգանիզմի նյութափոխանակությունը, առողջությունը, դիմադրողականությունը, մթերատվությունը և սերնդատվությունը կարգավորելու համար:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Նկարագրել կերատեսակների պաշարման գործընթացը, դրանց օգտագործմանը ներկայացվող տեխնոլոգիական պահանջները: 2. Նկարագրել կերատեսակները, դրանց քիմիական բաղադրությունը: 3. Հաշվառել տնտեսության կերի բազան ըստ նորմավորված կերակրման: 4. Կիրառել կերատեսակների սննդարարության գնահատման մեթոդները,

	կերակրման նորմաները: 5. Վերլուծել տարբեր տեսակի, տարիքի, սեռի, ֆիզիոլոգիական վիճակի ու մթերատվության կենդանիների լիարժեք և հաշվեկշռված կերաբաժինները: 6. Կիրառել կենդանիների օրգանիզմի նյութափոխանակությունը, առողջությունը, դիմադրողականությունը, մթերատվությունը և սերնդատվությունը կարգավորելու համար առկա խոչընդոտները, խնդիրները բացահայտելու և լուծումներ գտնելու կարողություններն ու հմտությունները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, սլայդերի, տեսաֆիլմերի շնորհանդեսների ցուցադրում, լաբորատոր պարապմունքների անցկացում, բանավեճեր, քննարկումներ, խմբային աշխատանք Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն բանավեճերին, քննարկումներին, իրավիճակային խնդիրների լուծմանը
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ինֆորմատիկա և վիճակագրություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Բարձրագույն մաթեմատիկա» առարկայի հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ներկայացնել ինֆորմացիայի մշակման և վերլուծության եղանակներն ու մեթոդիկան, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ոլորտային խնդիրները լուծելիս և ուսանողի մոտ ձևավորել բազային գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ՝ օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների կիրառման համար:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Ներկայացնել տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեթոդներն ու գործիքակազմը համակարգչային տեխնոլոգիաների միջոցով: 2. Ներկայացնել համակարգչի տեխնիկական և ծրագրային միջոցների դերակատարությունը, մասնավորապես՝ ժամանակակից կիրառական ծրագրային միջոցների հնարավորությունները: 3. Ստեղծել մասնագիտական ոլորտին վերաբերող էլեկտրոնային փաստաթղթեր և շնորհանդեսներ՝ օգտագործելով համակարգչային բազային և

	մասնագիտական ծրագրային միջոցները՝ մասնագիտական ոլորտի հաշվարկներ իրականացնելու և պարզ տվյալների բազաներ մշակելու համար: 4. Վերլուծել տվյալներ՝ օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների գործիքակազմի կիրառմամբ: 5. Համադրել համակարգչային ծրագրային ապահովման գիտելիքներն ու հմտությունները՝ մասնագիտական ոլորտի խնդիրներ լուծելու և ստացված արդյունքները մեկնաբանելու համար: 6. Գնահատել մասնագիտական գործունեության արդյունավետությունը համակարգչային ծրագրերի գործիքախմբի օգտագործման միջոցով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ ներկայացում-վիզուալիզացիա, երկխոսություն, քննարկումներ Ուսումնառության մեթոդներ՝ համակարգչային խնդիրների լուծում, ուսումնամեթոդական գրականության և այլ նյութերի ուսումնասիրում, առաջադրանքների կատարում MS Office փաթեթի ծրագրակազմի օգնությամբ
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագրի (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ֆինանսական պատրաստվածություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Մաթեմատիկա» առարկայի հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տեսական և գործնական հիմնարար գիտելիքներ ֆինանսների, ֆինանսական գործառնությունների և հարաբերությունների վերաբերյալ՝ զարգացնելով ֆինանսական որոշումներ կայացնելու ունակությունները:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Ներկայացնել ֆինանսական հիմնական հասկացությունների էությունը և բովանդակությունը, փողի հիմնական գործառնությունները: 2. Ընտրել համապատասխան ֆինանսական ծառայություններ՝ ֆինանսական խարդախություններից և զերծարարություններից խուսափելու համար: 3. Դասակարգել խնայողությունների արդյունավետ գործիքների տեսակները: 4. Հաշվարկել փաստացի տոկոսադրույք և տոկոսային եկամտաբերություն: 5. Կառուցել ֆինանսական որոշումների կայացման գործընթացում գին/որակ

	հարաբերակցության վերաբերյալ գծապատկերներ: 6. Կատարել եկամուտների ու ծախսերի համառոտ հաշվարկներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, լաբորատոր պարապմունքներ Ուսումնառության մեթոդներ՝ ուսումնական նյութի ունկնդրում, մասնագիտական գրականության ուսումնասիրում, քննարկումներ, բանավեճեր
Գնահատման մեթոդները	Թեստային, բանավոր կամ գրավոր քննություններ, պրեզենտացիաներ, հոդվածներ, անհատական աշխատանքներ և այլն
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գյուղատնտեսության էկոնոմիկա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Մաթեմատիկա» առարկայի հետ հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ձևավորել հիմնարար գիտելիքներ, կարողություններ և գործնական հմտություններ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս խնդիրների վերհանման, արդյունավետության գնահատման, ֆինանսավորման ուղղությունների ընտրության և պետական աջակցության ծրագրերի ներգրավման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Ներկայացնել ագրարային ոլորտի հիմնական հասկացություններն և հայեցակարգերը: 2. Լուսաբանել արտադրության տնտեսական հիմունքները: 3. Տարբերակել արտադրական ռեսուրսային ներուժի վիճակի գնահատման և արդյունավետ օգտագործման մեթոդները: 4. Հիմնավորել գյուղատնտեսական արտադրության արդյունավետ մասնագիտացման, կենտրոնացման, կոոպերացման և ինտեգրման գործընթացների տնտեսական նշանակությունը: 5. Նկարագրել արտադրանքի արտադրության և իրացման, արտադրական գործոնների և ֆինանսական ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների համակարգը: 6. Պարզաբանել ագրարային ոլորտի ուղղվող ներդրումների հիմնավորման մեթոդները, ագրարային ոլորտի աշխատանքային ռեսուրսների առանձնահատկություններն ու դրանց արդյունավետ օգտագործման ցուցանիշների համակարգը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, լաբորատոր պարապմունքներ Ուսումնառության մեթոդներ՝ ուսումնական նյութի ունկնդրում, մասնագիտական գրականության ուսումնասիրում, քննարկումներ, բանավեճեր
Գնահատման մեթոդները	Թեստային, բանավոր կամ գրավոր քննություններ, շնորհանդեսներ, անհատական աշխատանքներ և այլն
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Վիրուսաբանություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	3 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ չկան
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է տրամադրել գիտելիքներ և ձևավորել գործնական հմտություններ վիրուսային հիվանդությունների հարուցիչների կենսաբանական առանձնահատկությունների, վիրուսային հիվանդությունների ախտորոշման եղանակների և դրանց դեմ պայքարի միջոցների, կենսաբանական զգայուն համակարգերի օգնությամբ վերուսների հայտնաբերման եղանակների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Նույնականացնել կենդանիների և թռչունների վիրուսային հիվանդությունների հարուցիչներին լաբորատոր հետազոտման եղանակների կիրառմամբ: 2. Ախտաբանական նյութը ենթարկել վիրուսաբանական փորձաքննության արդի սարքավորումների միջոցով: 3. Համեմատել հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները՝ կատարելով ճիշտ վերլուծություն և եզրահանգում: 4. Կարողանալ օգտագործել տեխնիկատեղեկատվական գրականություն:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տարբեր ուսումնական նյութերի, սլայդերի, տեսաֆիլմերի, շնորհանդեսների ցուցադրում, լաբորատոր պարապմունքների անցկացում, բանավեճերի, քննարկումների, խմբային աշխատանքի կազմակերպում Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը

Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ախտաբանական ֆիզիոլոգիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	7 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Ֆիզիոլոգիա» և «Կենսաքիմիա» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ և ձևավորել գործնական հմտություններ կենդանիների մոտ տարբեր ախտաբանաֆիզիոլոգիական գործընթացների առաջացման պատճառների, բնույթի, զարգացման առանձնահատկությունների, ընթացքի և հնարավոր ելքի վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Նկարագրել ախտաբանաֆիզիոլոգիական գործընթացների առանձնահատկությունները, պատճառները, բնույթը, զարգացման մեխանիզմները, հնարավոր ելքը: 2. Նկարագրել տարբեր օրգան համակարգերի գործունեության խանգարման տեսակները դրանց ախտահարման ժամանակ, տիպիկ ախտաբանական գործընթացների զարգացման մեխանիզմները, օրգանիզմի վարքը տարբեր ախտահարումների ժամանակ: 3. Վերլուծել ախտաբանությունների զարգացման պատճառահետևանքային կապերը: 4. Բացատրել տարբեր ախտաբանությունների դեպքում դիմադրողականության դերը, բացահայտելով ախտաբանությունների ընթացքի առանձնահատկությունները տարբեր կենդանիների մոտ: 5. Իրականացնել լաբորատոր կենդանիների նախապատրաստում փորձին (անշարժացում, ցավազրկում, անհրաժեշտության դեպքում՝ անզգայացում), արյունառում, արյան լիարժեք անալիզ, ամփոփելով հետազոտությունների արդյունքները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տարբեր ուսումնական սլայդերի, տեսաֆիլմերի, շնորհանդեսների ցուցադրում, լաբորատոր պարապմունքների անցկացում, բանավեճերի, քննարկումների, խմբային աշխատանքի կազմակերպում Ուսումնառության մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, դասախոսությունների ունկնդրում, մասնակցություն քննարկումներին,

	բանավեճերին, իրավիճակային խնդիրների լուծմանը
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանք, միջանկյալ և ամփոփիչ քննություններ
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Անասնաբուժություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Էթոլոգիա և բիոէթիկա
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Կրեդիտները (ECTS)	3 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը փոխկապակցված է «Ֆիզիոլոգիա», «Կենսաքիմիա», «Հյուսվածաբանություն, սաղմնաբանություն» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է ապագա անասնաբույժների մոտ ձևավորել բնության հետ փոխազդեցության բարոյական և էթիկական սկզբունքներ, համակարգային պատկերացումներ կենդանիների հոգեբանության, դրա ծագման և էվոլյուցիայի ընթացքում, հաղորդել գիտելիքներ կենդանիների վարքի և մարդկային գիտակցության ձևավորման կենսաբանական նախապայմանների վերաբերյալ:
